

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Բժիշկ Բիւմենսայի դասախօսութիւնները Թիֆլիսում—չին մարգարէն եւ ժամանակակից առաքելաւոր—Տուրքերկուշոգը իբրեւ հասարակական երեւոյթ—Ի՞նչ ասել է շեանգիւս, օդ եւ սնունդ—չիմնական եւ պաշտօնական միջոցներ քոմալոսի դիմ—Ի՞նչ կարող ենք անել մեր պայմաններում:

Ռուս գաղթականներին պէտական նպաստ—Գրիւսաւների օգնականներին նոր երկու պաշտօններ—Երեւանի հաղափազիսի ընտրութիւնը—Դասաս. պաշտօնի որոշումը հայոց եկեղեցուն պատկանող կաշուածքների դասասանական պաշտպանութեան իրաւունքի մասին—Կանանց բժշկական կուսակցութեան կարգադրութիւն—Սոցիալական կուսակցութեան կարգադրութիւն—Փոփոխութիւններ փիւնանսների եւ գիւնդարական միւնիստրութիւններում—Բարձրագոյն երովարտական հեռ. Արեւելի փոխարտաքին Գաւերազմի սոխրով ժողովուած գումարները—Մամուլի վերաբերեալ կարգադրութիւններ:

Թէ հասարակական կեանքում ինչ մեծ դեր կարող է կատարել որեւէ գաղափարով ոգևորուած անհատի համոզուած և կենդանի խօսքը—այդ մեծը բոլորս տեսանք բժիշկ Բիւմենսայի օրինակով. կենտրոնացնել հասարակութեան ուշադրութիւնը Թոքալտի սոսկալի աւերումներին վրայ, ներշնչել նրա մէջ այդ չարիքի դէմ մաքառելու ոգևորութիւն—ան մի գործ, որ կատարեց Բիւմենսայի հին հրէական մարգարէների աւիւնով: Բնականաբար ժամանակների հետ փոխուել են թէ ունկնդիրները և թէ քարոզիչները, քաղաքակրթութեան հետ և մեր աշխարհայեցողութիւններն ու սովորութիւնները, և այժմ մարդիկ չեն բաւականանում լոկ զգացմունքների վրայ ազդող հին մարգարէների պերճախօսութեամբ, չեն վարակուած նրանց էքստազով: Թերահաւատ մարդկութիւնը այժմ աւելի խստապահանջ է այդ կողմից, նա աւելի դրական բան է պահանջում. —անհրաժեշտ փաստերով, ճիշտ դիտողութիւններով և գիտնականօրէն դրուած փորձերով ապացուցուած ֆակտեր ու թւեր տուէք նրան, որ նա չափի, կշռի, շօշափի ձեր ասածները և ապա համոզուի: Եւ այժմ ամեն մի գաղափարի առաքեալ պէտք է սպառազինուած լինի գիտութեան զէնքերով, եթէ ուզում է յաջողութիւն գտնել ժամանակակից ունկնդիրների առաջ:

Սակայն այն գիտական փորձերը, թւերը, ճշմարտութիւնները, որ մեր առաջդրաւ Բլիւմենտալը, յայտնի էին համարեա մեր բոլոր բժիշկներին. ինչպէս պէտք է Մոսկուայից գար մի Բլիւմենտալ և ցոյց տար այդ բոլորը մեր հասարակութեան: Պատասխանը դժուար չէ գտնել.— Այդ բոլոր ցիրուցան նիւթերից՝ ինչպէս հարկն է՝ օգտուելու համար պահանջուում էր նախ որոշ գաղափարով ամբողջապէս տարուել և ապա՝ ունենալ ստեղծագործական յայտնի շնորհք... Մեզանում կարծում են թէ մտքի այդ յատկութիւնը (ստեղծագործական ընդունակութիւնը) լոկ վիպասանների և բանաստեղծների առանձնա-յատկութիւն է, մոռանալով որ նոյն ստեղծագործական սինթեզի պրոցեսան է կատարւում ամեն մի մտաւոր աշխատանքի ժամանակ, երբ զատ-զատ, ցիրուցան, անկապ ֆակտերը, մտքերը, տպաւորութիւններն ու դիտողութիւնները որոշ ընտրութեամբ և դասակարգութեամբ միացւում են և ամբողջութիւն կազմում: Այդ տեսակէտից մի կատարեալ ամբողջութիւն էին բժիշկ Բլիւմենտալի նշանաւոր դասախօսութիւնները Թիֆլիսում. գիտական անհերքելի ֆակտերը, վիճակագրական տեղեկութիւնները և իր անձնական տպաւորութիւնները նա կարողացաւ շաղկապել և այդ ամբողջութեան մէջ դնել խոր համոզմունքից բղխած իր ոգևորութիւնը: Եւ ունկնդիրները տեսան վառ գոյներով նկարագրած հասարակական չարիքի ծագման և դարգացման պատկերը և քաղաքակիրթ մարդկութեան կողմից նրա դէմ ձեռք առած կորովի միջոցները: Այդ դասախօսութիւնները այնքան տպաւորիչ էին, որ ամբողջ Թիֆլիսը ցնցուեց, համակուեց այդ չարիքի դէմ մաքառելու տենչով... Եւ այդպիսով հակաթոքախտային արշաւանքի այդ առաքեալը հասաւ իր նըպատակին:

Տուրերկուէ'ոզը, ինչպէս այդ պարզուեց Բլիւմենտալի դասախօսութիւններից և նրա կազմած ցուցահանդիսից, ժամանակակից հասարակական ամենամեծ չարիքներից մէկն է. նա խլում է ընտանիքից աշխատող ուժերը դրանց ամենածաղիկ հասակում (20-35 տարեկան). քաղաքակրթուած Եւրոպան իւրաքանչիւր տարի մի միլիոն կեանքեր է կորցնում միայն թոքախտից. մարդկութեան $\frac{1}{7}$ մասը մեռնում է այդ սոսկալի ցաւից: Մարդկութեան միակ հաւատարիմ բարեկամ և պաշտպանը՝ գիտութիւնը իմացաւ այդ ցաւի պատճառը, բացատրեց նրա տարածուելու և զարգանալու պայմանները, ցոյց տուեց և նրա դէմ մաքառելու միջոցները: Նա յուսահատուած մարդկութեան ասաց. «Մի վախենար. թոքախտը բուժելի է. բնութիւնը քեզ պարգևել է մաքուր օդ, անտառաշատ գեղեցիկ վայրեր, ծո-

վեղրեայ սքանչելի ափեր. մայր դետինը քեզ տալիս է առատութեամբ սնունդ.—վայելիր այդ բոլորից և քո ուժերի չափ միայն աշխատիր, և թոքախտը չի համարձակուիլ մօտենալ քեզ»! Բայց դժբախտաբար մարդիկ իրանց ուրոյն քաղաքակրթութեան շնորհիւ միայն ընտրեալների առանձնաշնորհ դարձրին մայր բնութեան այդ բարիքները, նրա օդը, նրա սնունդը, աշխատելու և հանգստանալու այդ նրա սահմանած չափերը: Սակայն բարեբախտաբար այդ կարգերը անփոփոխելի չեն, և քաղաքակրթութեան խաւար կողմերը կարելի է վերացընել, ուստի մեր բոլոր ջանքերը պէտք է ուղղուած լինեն՝ դարերի ընթացքում ստեղծուած նրա այլանդակ ախտերից ազատուելու համար:

Մեզ ասում են... «թոքախտը բուժելի է, միայն թէ հիւանդին տուէք մաքուր օդ, լաւ սնունդ և ֆիզիկական և հոգեկան հանգստութիւն»: Սակայն հասկանա՞ւմ էք, թէ այդ պահանջների տակ ի՞նչ հասարակական անարդարութիւններ կան թագնուած: Անշուշտ հասարակութեան ունեւոր դասակարգերի համար այդ բոլոր պահանջները սովորական բաներ են, և այդ է պատճառը, որ Կոխի բացիլները երեսպաշտութիւն են անում և խնայում հարուստներին, իսկ եթէ այնուամենայնիւ մի որեւէ դժբախտութիւն է պատահում հարուստին, նրա առաջ բաց են ամենաբեկի սանատորիաները... Իհարկէ, այն միլլիոնաւոր զոհերը, որ ամեն տարի տանում է թոքախտը, հարուստներից չեն, այլ չքաւոր, աշխատող դասակարգերից. ահա դրանց համար է, որ «օդը, սնունդը, հանգիստը» շռայլութիւն է դարձրել ժամանակակից քաղաքակրթութիւնը: «Մաքուր օդ» այդ դասակարգի համար նշանակում է լուսաւորուած, չոր, բաւականաչափ ընդարձակ և մաքուր բնակարան—այն մութ, խոնաւ նկուղների փոխարէն, ուր նա կուչ է գալիս իր թշուառ մանուկների հետ. «լաւ սնունդ» այդ դասակարգի համար նշանակում է ամեն օր կուշտ փորով կերակուր, կաթ, միս, ձու ունենալ. «հանգստութիւն» նշանակում է օրը 8 ժամ բանելով այնքան վաստակել, որ բաւականութիւն տայ նրան իր համեստ գոյութիւնը պահպանելու. «հոգեկան հանգստութիւն» նշանակում է ապահովել ընտանիքը դոնէդոռն ընկնելուց, երբ ընտանիքի գլուխը հիւանդութեան կամ ծերութեան պատճառով անկարող է աշխատել:

Արդ, մեր կեղտոտ քաղաքների չքաւոր թաղերում կարո՞ղ է գտնել բանւոր մարդը լաւ օդ. աշխատանքի և դրամադլիսի ներկայ յարաբերութեան մէջ կարո՞ղ է չքաւոր աշխատաւորը 8 ժամ բանելով՝ բաւականաչափ օրավարձ ստանալ, որպէսզի լաւ սնունդ առնի և հանգստանայ: Մեր փողոտ, հոտած փողոցներում մա-

քուր օդ կա՞յ, մեր քաղաքներում ընդարձակ հասարակական ծառաստաններ, պարկեր կան, ուր նա ազատ շունչ քաշի: Վերջապէս, մեր հասարակութեան մէջ նախաձեռնութեան և ինքնօգնութեան ոգին այնքան զարգացել է, որ բանւորներին ապահովող ընկերութիւններ կազմակերպուեն և այդ ընկերութիւնները հէնց իրանց օգտի տեսակէտից բանւորական սանատորիաներ հիմնեն: Այսպիսի հարցերի մասին եթէ մտածենք, մենք միայն մեր յետամնացութիւնը, մեր ողորմելիութիւնը կը տեսնենք: Մինչդեռ այդ բոլոր հարցերն իրանց տուել են մեղանից առաջ անգլիացիները, ֆրանսիացիները, գերմանացիները և աշխատել են վերացնել բացասական պատասխաններն իրանց դրական գործունէութեամբ: Եւ նրանց աջողուել է շատ բան անել այդ ուղղութեամբ և շօշափելի արդիւնքների հասնել այդ չարիքի դէմ մաքառելու գործում: Իսկ մենք... քաղաքակրթութեան պոչում ընթացող արեւելիներա լաւ է որ նոր-նոր զարթոնում ենք մեր քնից և մտածում բարի օրինակ վերցնել առաջադէմ ազգերից... Կովկասեան բժշկական ընկերութիւնը նոյնիսկ մշակել է առաջին «Հակաթոքախտային ընկերութեան» կանոնադրութիւն և դեռ մի տարի առաջ ներկայացրել իշխանութեան ի հաստատութիւն: Դեռ պատասխան չկայ:

Իսկ մինչ այս մինչ այն՝ վատ չէր լինի, որ մեր քաղաքային ինքնավարութիւնը մտածէր ազատելու մեր խեղճ թոքերը նրա կառավարած փողոցների անտանելի փողոց, չքաւոր թաղերի միազմեցիկ և հոտերից, տար մեզ գոնէ մի ընդարձակ հասարակական պարկ, իր սեփական հողերի վրայ կառուցանէր էփան բնակարաններով տներ, այսինքն՝ մի մուշիցիպալիվացիան, որ շատ ձեռնտու է և տնտեսներին, տարածէր նաև բնակարանների վրայ, որ այնքան էլ ձեռտու չըպէտք է լինի նոյն տնտեսը-ձայնաւորների համար...—Այդպէս յայտնեցէք դուք ձեր սէրը թէ դէպի Բլումենտալը և թէ դէպի Ժողովուրդը... Դասախօսութիւններից մենք իմացանք, որ Անգլիան կուռում է տուբերկուլ՝ ոգի դէմ՝ աւելի մեծ ուղադրութիւն դարձնելով նախազգուշական միջոցների վրայ, Գերմանիան՝ աւելի է ծանրանում հիւանդութիւնը բժշկելու վրայ՝ սանատորիաներ հիմնելով, իսկ Ֆրանսիայում պրոֆեսսոր Կալմետի սիստեմըն է արմատներ գցում և բարեգործութիւնը միանում է բժշկութեան հետ (հիւանդին բժշկում են իր տանը՝ մատակարարելով նրան սնունդ, բարւոքելով նրա կացութիւնը): Մակայն չպէտք է մոռանալ, որ այդ երկրներում հնարաւոր է առհասարակ հեշտութեամբ և շուտ իրագործել շատ այլ հասարակական պայմանների փոփոխութիւններ, միաժամանակ այդ երկրներում

մուշիցիպալիտետները ձեռք են առել մի շարք այնպիսի միջոցներ, որոնց մասին մեր «քաղաքի հայրերը» չեն էլ երազել և գուցէ առիթ ունենան նոր-նոր ծանօթանալ այդ բոլորի հետ բժիշկ Ա. Նատիսեանի «Вопросы общественного здравоохранения на выставкѣ германскихъ городовъ въ Дрезденѣ» հետաքրքրական բրոշյւրից...

Որքան շատ բան կայ անելու և ո՞րչափ խեղճ ենք մենք, Տէր Աստուած, և յետամնաց...

Մարտի 18.

Լ. Ս.

— Կովկաս եկող ռուս գաղթականութեան գործերը վարելու համար ներքին գործերի մինիստրութիւնը 40,000 ռուբլի է յատկացրել Կովկասեան գլխաւոր վարչութեանը:

— Այս տարւայ փետրուարի 2-ին Բարձրագոյն հաստատուած է պետական խորհրդի որոշումը, որով աւելացնուած են պրիստանների օգնականների երկու պաշտօններ. մէկը Իգդիր գիւղաքաղաքի համար, Սուրմալուի գաւառում, իսկ միւսը Վաղարշապատի համար, Էջմիածնի գաւառում (ՅԱՅԵ):

— Երևանի քաղաքագլուխ է նշանակուած Յովհաննէս Մելիք-Աղամալեանը, նախկին քաղաքագլուխ Իսահակի եղբայրը: Ինչպէս գիտեն մեր ընթերցողները, երկու անգամ էր ընտրութիւն նշանակուել քաղաքագլխի համար. առաջին անգամ ընտրուած թեկնածուները ենթարկուեցին կրկնաքուէարկութեան և որոշ ելքի չհասնելով, երկրորդ անգամ քուէարկութեամբ ընտրուեց երդուեալ հաւատարմատար Մնացականեանը, որին իշխանութիւնը չհաստատեց:

— Վճիռ Հայկական եկեղեցուն պատկանող կալուածքների դատաստանական պաշտպանութեան իրաւունքի հարցի վերաբերմամբ՝ 1903 թւի յունիսի 12-ի նոր օրէնքի հրատարակութիւնից յետոյ:

Ներկայ մարտի 10-ին, Թիֆլիսի դատաստանական պալատի 2-դ քաղաքացիական դեպարտամենտը, կազմուած՝ դատաստանական պալատի դեպարտամենտի նախագահ Ն. Պ. Սմիտտէնից, անդամներ Ի. Ս. Պօզնեակովից և Ա. Պ. Բուտէնկօից և մասնակցութեամբ պրոկուրորի օգնական Ա. Ադիգեովի, լսեց Վրաստանի և Իմերէթի հայ-լուսաւորչական թեմական կոնսիստորիայի հաւատարմատար երդուեալ հաւատարմատար Ս. Ս. Մէլիք-Աղամալեանի մասնաւոր զանգատը Թիֆլիսի նահանգական դատարանի 1903 թւի նոյեմբերի 26-ի որոշ-